

# Իրավունք մշակույթ

Չկա Հասարակության  
առանց իրավունքի  
Ubi societas ibi jus

Երկշաբաթեր  
թիվ 4 (24)  
2008 թ. մարտի 15

## ՃՇՄԱՐՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Շիրախանձը գեուևս ձեղ մեջ է, և դուք կուվում եք միմյանց ձեռ. մի՞թե դա չի Հասարակության, որ դուք սրտակնում եք այս աշխարհին և սպում եք նրա շահանկնեղով...» Ա կոմիթ. 3:3

Մեծ պահք է: Առջևում Սուրբ Գրություն, Մեծ Ձատիկի տոնն է:

Աստվածաշունչը, Դայերը սովորեցնում են, որ պահքի շրջանն ապաշխարության, զղջումի, ինքնազննումի ու ինքնահսկումի, ժուժկալության, ներումի ու հաշտության, խաղաղության, հույսի և սիրո շրջան պիտի լինի:

Այդպես է: Ավադ... Ցնծում է բանասարկուն...

Այն, ինչ կատարվեց երևանում, ցնցեց մեր ամբողջ ժողովրդին ու հեռավոր ավերումն ապրող նրա զավակներին ու բարեկամներին: Կատիցա Չեկավուլիչը հեռավոր Չիլիից գրեց. «Ուրք չեք կարող պատկերացնել, թե որքան ցավալի էր ինձ համար դիտել BBC հեռուստահաղորդումը Դայաստանի մասին: Գիրավի, մենք չենք կարող ժխտել, որ խաղաղության, զարգացման, ժողովրդավարության ճանապարհը դժվար է: Ես միանում եմ ձեր աղոթքներին՝ խաղաղ ու բարի լուծում գտնելու համար: Ես ուզում եմ հավատալ, որ Դայաստանի քաղաքական առաջնորդների մեջ կան բավականաչափ իմաստուն այրեր, որոնք երկիրը ճշմարիտ ճանապարհով կտանեն:

Ձերմազին ողջույններ բուրբիղ և յուրաքանչյուրիդ»:

Ես միշտ հավկած եմ եղել երկրի դժվարությունների հարցում մեղադրել առաջին հերթին մտավորականությանը, որին ազգը ծնել, կրթել ու դաստիարակել է եկող սերնդին կրթելու, դաստիարակելու և ուղիղ ճանապարհով առաջնորդելու և ոչ թե միայն արվեստանոցներում մեկուսանալու, բեմերի վրա քայլելու կամ զրասեղաններին կրթելու համար: Անշուշտ, այս անգամ մտավորականությունն ասաց իր խոսքը: Բազմաթիվ ահազանգեր, զգուշացումներ, հորդորներ եղան: Մերուժան Տեր-Գուլանյանն ավելի քան մեղմորեն գրեց. «Ես տխրեցի, երբ իմ ընկեր Լևոն Տեր-Պետրոսյանը Դայաստանն ավազակապետություն կոչեց...»: Դազարավոր կանայք խաղաղության երթ կազմակերպեցին՝ «Ո՛չ ատելությանը», «Ո՛չ ընտրակեղծիքներին», «Կանգ առեք, եղբայրներ» կարգախոսներով, կոչ-ուղերով դիմեցին 33 մայազահության բուր թեկնածուներին՝ օդ արձակելով ճերմակ աղավիհներ... Սուրեն Չուլազը գրեց. «Ինքը լավ գիտի, որ ամեն գոհեթի արյունը զանգվածին մոթիլիզացնելու շատ հզոր միջոց է...» («Առավոտ», 2008.02.13): «Ազգ» թերթում տպագրվեց կրճեց Մանվելյանի «Մենք մայազահական ընտրությունների՝ ենք պատրաստվում, թե՛ քաղաքացիական պատերազմի» ավելի քան սթափեցնող

վերնագրով հոդվածը (2008.02.17): Ասկայն դրանք ուշացած էին առնվազն տա՛սը տարով:

Շատերն ապշել էին Ազատության հրապարակում ահազանգող բազմությունից ու այդ մարդու մեջ նորից փորձեցին «փրկչի» տեսնել՝ կանգնելով նրա կողքին կամ հրապարակում նպաստելով դեպքերի ընթացքին... Եվ խոտվություն եղավ հանուն... արդարության, սպանությունների, հրկիզումների ու թալան՝ հանուն... ճշմարտության: Ձավեշտ է: Պատմությանը հայտնի չէ գեթ մեկ օրինակ, երբ այդպիսի միջոցներով արդարության ու ճշմարտության եմ հասել: Ամնաբուր ձեռքերով ազնիվ աշխատանք կատարելն անհնար է: Այդ «շարժման» առաջագամները, սակայն, ոչ միայն պատմության, այլև սեփական փորձն էին «մոռացել», երբ հենց իրենք 1990 թ. մայիսին (չատերի մտ բարի համարում ունեցող) խորհրդարանական ընտրություններում ընտրակեղծիքներ էին թույլ տալիս կամ ինքնախաբեությամբ հանդուրժում դրանք՝ «կոմունիստներին հեռացնեց իշխանությունից ու էլ չենք անի», բայց հինգ տարի հետո կեղծեցին սահմանադրական հանրաքվեն, իսկ հաջորդ տարի տանկերով զավթեցին իշխանությունը՝ դառնալով անիրավությանը իշխանությունը չզիջելու մայազեպի հիմնադիրները: Եվ այժմ ի՞նչ ու նոր «սրբերով» լեցուն այդ տրոյական ձին իշխանության բազում արատներից ու թույլ տրված ընտրակեղծիքներից հիրավի դժգոհ բազմության ձեռքերով ու անմեղ կյանքերի գնով հրվում է մայազահական պալատից ներս...

Որտե՞ղ է սխալը, բացթողումը: Ինչու՞ մեզ հետ այսպիսի բան պատահեց: Այդ ինչպե՞ս, որտեղի՞ց հայտնվեց 1988-ի սրբազան շարժումը վարկաբեկած հրձիգն ու հրկիզողը, սպանողն ու թալանողը, երևանի մայրերին կանգնող մարմնավաճառը... Ո՛վ ծնեց ու այդպես «դաստիարակեց» նրանց:

Պատասխանը պարզ է: Երանք տասը տարի շարունակ մեր աչքերի առաջ ու մեր լուռ թողություններ «կրթվում» ու «հիմնանում» են հեռուստաէկրաններից հայոց Տունն ու ընտանիքները քանդող հաղորդաշարերի պղծաշուրթ հեղինակների ու ամբարտավան վարողների կողմից: Այդ հաղորդաշարերի, սերիալների, գրայինությունների ու կրպակները հեղեղած կրթության, մանկավարժության հետ առնչություն չունեցող ու շուկայի օրենքներով դասակարգված ղուրս մղած քափոնների (մակուլատուրայի) տերերի կողմից...

→ էջ 6

## ՋԱՅՆ ՄԵԾՍԱՑ

Դեռ կուրացած ժանգ արծաթից՝  
Մատնություններ են անում,  
Եվ փախչելով արդար դատից՝  
Միշտ ձեռքերն են լվանում:

Ապտակում են դեռ ծաղրելով  
Անմեղության ծակատին,  
Եվ հարսության օր տոնելով՝  
Խաչն են հանում ծշմարտին:



Հովհաննես Թումանյան

## Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում \_\_\_\_\_ էջ 2

Արմավիրի քաղաքացիական հասարակության  
առաջատարը \_\_\_\_\_ էջ 3

Դուկտոր Ա. Քալաջյանը կազմակերպել է մարդու  
իրավունքների խախտումների և դրանց վերականգնման  
վերաբերյալ ՄԱԿ-ի առաջին գիտաժողովը \_\_\_\_\_ էջ 3

Լևոն Ներսիսյան. «Տասը օրեր, որ ցնցեցին ազգը» \_\_\_\_\_ էջ 4

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ուղերձը \_\_\_\_\_ էջ 4

Առօրյա կիրառելի օրենքներ \_\_\_\_\_ էջ 5

Ա. Կիրակոսյան. «Գեղազիտական դաստիարակության  
դերն անհատի ձևավորման գործում» \_\_\_\_\_ էջ 6

Վահան քահանա Ազարյան. «Տիրոջ արքայության  
գալստի նախաշեմին» \_\_\_\_\_ էջ 7

Սուրբ Գրիգոր Տաթևացի. Դատվածներ.  
«Ապաշխարության մասին» \_\_\_\_\_ էջ 7

Իմ բաժին քարը Մարդու իրավունքների հայկական  
դպրոցի շենքին \_\_\_\_\_ էջ 8

Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ \_\_\_\_\_ էջ 8



# Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

## ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի խոսնակի հայտարարությունը Հայաստանի մասին

Գլխավոր քարտուղարը խորապես մտահոգված է Հայաստանում ռստիկանական ուժերի և ցուցարարների միջև տեղի ունեցած բախումների աղիթով: Նա հույս է հայտնել, որ այս իրադարձությունները, որոնց ընթացքում 8 մարդ է մահացել, հանգամանորեն կհետաքրքրվեն:

Գլխավոր քարտուղարը կոչ է արել կողմերին զգուշացնել ցուցաբերել և ընթացիկ ճգնաժամը հարթահարելու ուղիներ որոնել: Նա նաև Հայաստանի իշխանություններին հորդորել է բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկել՝ բնականորեն վիճակ վերականգնման և արտակարգ իրավիճակի անհապաղ վերացման համար:

Նյու Յորք  
2008 ք., մարտի 3

### Արբորը անհանգստացած է Հայաստանում ետքնարական ցույցերի ընթացքում գտնվող փաստավոր

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Լուիզ Արբորը հայտնել է, որ խորապես անհանգստացած է Հայաստանի մարդաբաղաբ երևանում ցույցերի ընթացքում տեղի ունեցած բախումների արդյունքում 8 զոհվածների և բազմաթիվ վիրավորների կապակցությամբ:

Նա իշխանություններին կոչ է արել ցուցաբերել ծայրահեղ զգավածություն և երաշխավորել, որ ձեռքարկություններին հետևեն համապատասխան գործընթացներ:

Գերագույն հանձնակատարը հիշեցրել է, որ Հայաստանը Քաղաքացիական ու քաղաքական իրավունքի միջազգային դաշնագրի մասնակից է, որի համաձայն՝ արտակարգ իրավիճակների դեպքում պետք է պահպանվեն մարդկային հիմնարար իրավունքները՝ կյանքի իրավունքը և խոշտանգումների, դաժան, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելումը:

### ՄԱՐԿՈՒ ԻՐԱՎՈՒՆԷՆՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ

Մարտի 21 - Ռասայական խտրականության դեմ պայքարի միջազգային օր  
Մարտի 22 - Տրայիկ պաշարների միջազգային օր  
Մարտի 23 - Օղերուկաբանության համաշխարհային օր  
Մարտի 24 - Տուբերկուլոզի դեմ պայքարի համաշխարհային օր

Իրավունքների ցանկացած սահմանափակում պետք է լինի չափավոր և միայն օրենքի համապատասխան:

## Գործողությունների եվրոպական շաբաթը ընդդեմ ռասայական խտրականության

Բռնությունը, սպանություններն ու խոշտանգումները եվրոպայում տարածված ռասայական խտրականության դրսևորման ձևերից են: Ռուսաստանում 2007 ք. հունվարի 1 - հոկտեմբերի 31-ը նվազ ժամանակահատվածում ռասիստական զրդապատճառներով 270 հարձակումներ են արձանագրվել, որոնց հետևանքով տուժել է 472 մարդ և մահացել 53-ը:

1960 ք. Հարավային Աֆրիկայի Շարիֆվիլ բնակավայրում ռասիզմի հողի վրա կատարված 69 սպանությունների ի պատասխան՝ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից մարտի 21-ը հայտարարվել է Ռասայական խտրականության դեմ պայքարի միջազգային օր: Գործողությունների եվրոպական ամենամյա շաբաթվա շրջանակներում, որը ծավալվում է մարտի 21-ին նախորդող և հաջորդող մի քանի օրերում:



Իր ընթացքում, հազարավոր մարդիկ ակտիվորեն ներգրավվում են քարոզարշավին: Ի պաշտպանություն հանրութոշականության և իրավահավասարության: Այս տարի մեկ անգամ և ամբողջ եվրոպայում կազմակերպվում են հարյուրավոր միջոցառումներ:

Ավելի քան 560 կազմակերպություններ և երիտասարդական կենտրոններ եվրոպական երկրներին աշխատում են կամավորական հիմունքներով: Նրանց համագործակցությամբ կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, որոնք նախատեսում են մանկաշրջանային երիտասարդական փառատոներ:

## Կարողալու և գրելու դժվարությունները չափահասների շրջանում

Կիարոսի մեծահասակների կրթության ասոցիացիան 2008 ք. հոկտեմբերի 22-26-ը կզուղի Լիմասոլ քաղաքում կազմակերպվում է «Կարողալու և գրելու դժվարությունները մեծահասակների շրջանում» թեմայով դասընթացը: Նպատակն է բարձրացնել իրազեկությունը կարողալու և գրելու դժվարությունների անցյալը խնդիրների վերաբերյալ և օգնել այն չափահասներին, ովքեր ունեն մնացած խնդիրներ:

Դասընթացին մասնակցել կարող են բոլոր նրանք, ովքեր իրենց աշխատանքում անցյալում են կարողալու և գրելու դժվարություններ ունեցող չափահասների հետ: Դասընթացի լեզուն է անգլերենը: Դիմումները ներկայացնելու վերջնաժամկետն է 2008 ք. հունիսի 30-ը: Հեռավոր է մանկաժամկետի անցկացումը: Լրացուցիչ տեղեկությունների համար կարելի է այցելել դասընթացի կայքէջ՝ <http://ec.europa.eu/education/trainingdatabase/search.cfm> և փնտրել CY-2008-036-001:



## Սոմալիում իրավիճակը շարունակվում է լարված մնալ

Իրավիճակը Սոմալիի մարդաբաղաբ Մոգադիշոում և երկրի հարավային շրջաններում ճգնաժամային է: Անցյալ տարվա սկզբին Եթովպիայի և Սոմալիի կառավարական ուժերի և ապստամբների միջև սրված հակամարտության հետևանքով հազարավոր քաղաքացիներ են սպանվել ու վիրավորվել: Հակամարտության բոլոր կողմերը պատահաժամանակություն են կրում միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կրպիտ խախտումների համար, որոնց համար են պատերազմական հանցանքների:

Պատերազմող կողմերի հարձակումներն ու բռնությունները հանգեցրել են շարունակական լայնածավալ տեղահանության. 700.000 մարդ, որը կազմում է Մոգադիշոի բնակչության 60 տոկոսը, համաձայն ՄԱԿ-ի հաշվարկների, տեղահանվել են քաղաքից:

Լրատվամիջոցների վրա կատարվող պարբերական հարձակումները ոչ միայն խոչընդոտում են երկրում առևտրի իրավիճակի և հակամարտության մասին լուսաբանումը, այլև խաթարում են խոսքի ազատությունը: 2007 ք. փետրվարից ի վեր Սոմալիում սպանվել է ինը լրագրող: Մահվան սպանություններն ու ձեռքարկությունները ստիպել են ամենազգեստ 50 լրագրողների ապաստան փնտրել հարևան երկրներում: «Միջազգային համաձայնագրի» կազմակերպությունը կոչ է արել բոլոր երկրներին կառավարությունների ապաստան տալ Սոմալիի լրագրողներին և չհարկադրել նրանց վերադառնալ իրենց երկրները:



հարձակման ժամանակ սպանված Սեդիյա փեյդա ղե Մելոյին:

ՄԱԿ-ի լրատվական ծառայություն


## Ուկրաինան անտեսում է ապաստան հայցողների իրավունքները

Ուկրաինայի կառավարությունը հարկադրաբար Շրի Լանկա և վերադարձել 11 երեխա թամիլացի ապաստան հայցողների, որոնց այդ երկրում սպանում է խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու վտանգը:

«Միջազգային համաձայնագրի» կազմակերպությունը խստագույնապես դատապարտել է Ուկրաինայի գործողությունները դրանք որակելով որպես մարդու իրավունքների և մասնավորապես փախուսածների իրավունքների մասին միջազգային համաձայնագրի խախտում: Կազմակերպությունը նաև մտահոգված է այն փաստով, որ Ուկրաինայում գտնվելու ընթացքում այդ մարդկանց չի տրվել նրանց խնդրանքը թեմարկելու արդարացի ընթացակարգի հնարավորություն:

Սա առաջին դեպքն է, երբ Ուկրաինան անտեսում է ապաստան հայցողների իրավունքները: 2006 ք. մարտին «Միջազգային համաձայնագրի» կազմակերպությունը նամակ էր գրել նախագահ Յուշչենկոյին՝ մտահոգություն հայտնելով 11 ուղբերկ ապաստան հայցողներին մոյնպես հարկադրաբար Ուկրեյնա կառավարությունը համար:

«Միջազգային համաձայնագրի» կազմակերպության մամլո հարոդրագրություն



## ԱՄԻԱ

### Պակիստանի իրավաբանների շարժումը մեկ տարեկան է

Մարտի 9-ին լրացավ Պակիստանում իրավաբանների շարժման առաջին տարին: 2007 ք. այդ օրը Պակիստանի գլխավոր դատավոր Իֆտիխար Չոուրիին ռուսաց օրինակ հիմք վաշտոնանկ արվեց գեներալ Մուշարաֆի կողմից: Ի նշան գլխավոր դատավորի հետ համերաշխության երկրով մեկ իրավաբաններն անմիջապես արձագանքեցին դեպքին՝ կազմակերպելով խաղաղ ցույցեր ու բոլոտներ:

Հաշվի չառնելով սեփական տնտեսական կորուստները նրանք շարունակեցին պայքարել հանուն իրավունքի տիրապետության, գլխավոր դատավորի՝ պաշտոնում վերականգնման, դատական համակարգի գերիշխանության և սահմանադրականության հաստատման:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ու լրագրողները նույնպես աջակցեցին շարժմանը: Նրանցից շատերը ձեռնարկվեցին, խոշտանգումների ու ձեռք ենթարկվեցին իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից:

Այս շարժումը կարող է որակվել որպես Պակիստանի ապագա ժողովրդավարության անկյունաքար:

2007 ք. հուլիսի 20-ին գլխավոր դատավոր Չոուրիին վերականգնվեց իր պաշտոնում: Հեռավոր է, որ այդ օրը կնճառվի որպես Պակիստանի դատական համակարգի անկախության օր:



### Լուիզ Արբորը պաշտոնավարման երկրորդ ժամկետին չի հավակնում

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մուլոն Կիտանոն ասաց, որ իր ժամկետը լրացավ: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Լուիզ Արբորի պաշտոնավարման առաջին քառամյա ժամկետն ավարտել է և երկրորդին չհավակնում:

Պարոն Մուլոն ԵՆԵ է, որ ինքը մեծապես տպավորված է Արբորի արտասովոր եռամսյակի ու քաջությամբ, որով նա երեք չի վարանել, անգամ պետությունների կողմից քննադատության արժանանալու գնով, մտանցել ազգային իրավապաշտպանության փառատոնի անհանգստացող իրավունքների և մշտական ներկայացրել է կազմակերպության բարձրագույն ինքնակազմ:

Տիկին Արբորը գերագույն հանձնակատարի պաշտոնը ստանձնել է 2004 ք. հաջորդելով Բադդարուն Կիտանոնին:



# Մենք՝ քաղաքացիական Հանարակույթյունը

ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հարցազրույց ԱԶԿ գործադիր տնօրեն  
Նաիրա Առաքելյանի հետ



Առաքելություն է՝ համագործակցություն հանուն սոցիալ-տնտեսական առաջընթացի:

Նպատակներն ու խնդիրներն են՝

- ժողովրդավարական կառավարման թափանցիկ և պատասխանատու համակարգի հաստատում և բարելավում.
- աջակցություն քաղաքացիական հասարակությանը.
- կայուն սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովում:

Տեղեկությունները  
Հինադղվել է՝ 2005 թ.:  
Նախագահն է՝ Նաիրա Առաքելյանը:  
Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ,  
ք. Արմավիր, Հ. Ավետիսյան 39ս  
Հեռ.՝ (237) 6-30-34  
Էլ. փոստ՝ armavirdc@xter.net



Նաիրա Առաքելյան – Ինչպիսի՞ խնդիրներ ու նպատակներ ունի «Արմավիրի գաղափար կենտրոնը» մարզի սոցիալ-տնտեսական առաջընթացի ուղղությամբ:

Նաիրա Առաքելյան – Կարևորվում է մարզի կայուն սոցիալ-տնտեսական առաջընթացը՝ ԴԿ-ն իր առջև խնդիր է դրել խրախուսել և նպաստել մարզի պետական, հասարակական և գործարար հատվածների համագործակցությանը: Դա է մեր առաքելությունը:

Լ. Բ. – Գործունեության ի՞նչ միջոցներ եք օգտագործում կազմակերպության առջև դրված ռազմավարական նպատակներին հասնելու համար:

Ն. Ա. – Ռազմավարական նպատակներին հասնելու համար օգտագործում ենք գործունեության հետևյալ միջոցները՝ քաղաքացիական կրթություն, հետազոտություններ և հրատարակություններ, ԱԶԿ համախոհների և շահառուների իրավունքների ու շահերի պաշտպանություն, խորհրդատվություններ, դասընթացներ, սեմինարներ և այլն:

Այսօր մարդկությանը սպառնում են բազմաթիվ արհավիրքներ՝ պատերազմ, ընդհարումներ և բռնություններ, որոնք, սակայն, համայն անպատիժ են մնում: Որպես այս աշխարհի բնակիչներ՝ այլևս չպետք է հանդուրժե՞ք անարդարությունը ու անիրավեկությունը, ժամանակ է գործելու: Կյանքը բարեփոխելու հնարավորությունը պայմանավորված է աշխարհում առկա բազմաթիվ ճգնաժամերը հաղթահարելու համար կարելիացնող, փոխըմբռնում և մղիվածություն դրսևորելու մեր ունակությամբ, և մեզմիջև յուրաքանչյուրն այդ գործում ներդրելու համար որոշակի ներուժ ունի: Վերջերս Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում, տեղի ունեցավ ճանաչված իրավապաշտպանների համախորհուրդի Բրաուն Գալտի և ՄԱԿ-ի ղեկավար Ֆրանսուա Ուբիդայի հետ, և քննարկվեց առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առանձին երկրների դերը:

Բացման խոսքով հանդես եկան գիտա-ժողովի նախագահողներ ղեկավար Ուբիդայ և դոկտ. Անի Քալայանը: Վերջինս կարևորեց մարդու իրավունքների վերականգնման գործում մտքի, մարմնի և հոգու միասնականությունը:

Գիտաժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին հայ լրագրող Դրամու Դինգի հիշատակը, ով սպանվել էր Ստամբուլում ժողովրդավարական գաղափարների և ազատ խոսքի համար: Նշվեց, որ պատմությունը տեղի ունեցել է պատասխան և ի հետևանք սերունդներում լուծում չստացած ողբերգության Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի, հույների և այլ քրիստոնեական փոքրամասնությունների նկատմամբ թուրքական պետության իրականացրած եղեռնի: Այնուհետև դոկտ. Քալայանը խոսեց աշխարհում տեղի ունեցող անարդու իրավունքների բազմաթիվ խախտումների մասին, այդ թվում՝ երեխաների նկատմամբ կոպտ վերաբերմունքի, Ռուսաստանում սեռական շահագործման նպատակով իրականացվող մարդավաճառության, որի զոհ են դառնում առավելապես քրեները, հայերն ու առևտարակ քրիստոնյաները:

Նշվեց, որ մեծ բռնություններից տուժածներին աջակցելու համար անհրաժեշտ է ցուցաբերել կենսաօգնություն-սոցիալական և հոգևոր աջակցություն:

Աղբյուրը՝ «Իմաստալի աշխարհ» լրագիրը  
Հեղինակներ՝ ՔՐԻՍՏԻԱ ՌԻՒՊՈՒԻ  
ՋԵՄԿԱ ՓՅՈՒՏՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐԸ

տական լրատվամիջոցներով:

ԴԿ-ն հանդիսանում է նաև «Համաշխարհային կոչ ընդդեմ աղքատության» դաշինքի անդամ, 2005-2006 թթ. «Համընդհանուր կոչ հանուն կրթության» դաշինքի անդամ, մարզում տարբեր միջոցառումներ և կլոր սեղաններ է կազմակերպել: Հասարակական ակտիվության շրջանակներում 2007 թ. Աժ ընտրությունների ընթացքում իրականացրել է դիտորդական առաքելություն մարզի բոլոր ընտրատարածքներում:

2005-2006 թթ. իրականացրել է ՄԱԶ «Աջակցություն քաղաքացիական հասարակության հակակոռուպցիոն նախաձեռնություններին» ծրագիրը: 2007-ին շարունակել է հակակոռուպցիոն դիտորդման իրականացումը մարզի առողջապահական և կրթական հաստատություններում՝ ՄԱԶ «Իրազեկման և հակազեցության բարելավում Հայաստանում կոռուպցիայի բացահայտման գործընթացում» ծրագրի շրջանակներում՝ նպաստելով կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Լինելով Քառյակի միջոցով իրականացրել է «Համայնքային բյուջեի հոգու գյուղացիների շահերի պաշտպանություն» ծրագիրը, որի նպատակն էր համայնքային մոնիթինգային միջոցով գյուղապետարանների բյուջեի ֆինանսավորմանը ստեղծել և ներդրել ազդեցություն հաստիքը, որը գյուղացիներին կնաստուցի անձնազորում գործունեական խորհրդատվություն:

ԴԿ-ն իրականացրել է նաև «Ավագանու որոշումները բնակչության տեսադաշտում» հետազոտման, իրատարակման դրամաշնորհային ծրագիրը:

Լ. Բ. – Ներկայումս միջազգային ի՞նչ կազմակերպությունների հետ եք համագործակցում:

Ն. Ա. – Համագործակցելով «Փրկեք երեխաներին» միջազգային կազմակերպության հետ՝ մարզում իրականացնում ենք ՆՕԿՄ (Լոդարարական օժանդակություն վերադարձողական առողջությանը) ծրագիրը Արմավիրի տարածաշրջանի տասներկու համայնքներում: Ներկայումս ավարտվել է վերոնշյալ գյուղական համայնքների բուժկետերի վերանորոգման և բժշկական պարագաներով ու գույքով կահավորման աշխատանքը: Առջևում են համայնքների բնակչության իրազեկման և բուժօրյութի վերապատրաստման փուլերը:

Բացի այդ՝ 2007 թ. նոյեմբերից իրականացրեցինք «Յուրաքանչյուրիս ծայրը որոշիչ է» ծրագիրը՝ համագործակցելով

Քառյակի միջոցով իրականացրելով ԱՅ ԵՖ Ի ԵՍ հայաստանյան ներկայացուցչություն հետ: Ծրագրի նպատակն էր՝ խթանել Արմավիրի մարզի բնակչության մասնակցությունը 2008 թ. նախագահական ընտրություններին, վերահսկել ընտրության ընթացակարգը՝ նպաստելով ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ընտրությունների անցկացմանը:

Համագործակցելով ԱՅ ԵՖ Ի ԵՍ հայաստանյան մասնաճյուղի հետ՝ ԴԿ-ն համալրագրեց ընտրացուցակների խորհրդատվական հանձնաժողովների անջնկ աշխատանքները Արմավիր քաղաքում և շրջակա գյուղական 11 համայնքներում:

Ֆինանսավորվելով Եվրասիա հիմնադրամի կողմից՝ «Արմավիրի խորհրդատվական կենտրոնը» Արմավիր քաղաքում ստեղծել է միգրացիայի և վերադարձի հարցերով քաղաքացիների ընդունելության կենտրոն, որը մատուցում է միգրացիայի հարցերով տարաբնույթ տեղեկատվություն, իրականացնում է միգրացիոն գործընթացների կարգավորման վերաբերյալ տեղեկատվություն, տեղեկատվություն առկա թափուր աշխատատեղերի մասին, խորհրդատվություն մոր բիզնես ձեռնարկելու համար և այլն:

Լ. Բ. – Ծրագրից ծրագիր ներկայացնում էք հաշվետվություններ, իրականացվող ծրագրերի շնորհիվ ստացվելու է արդյոք խորհրդատվություն:



Ն. Ա. – Յուրաքանչյուր ծրագրի պարտադիր ավարտվում է հաշվետվությամբ: ԱԶԿ-ի՝ որպես ժողովրդավարական քաղաքացիական հասարակության գաղափարներով ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություն, այո, մատուցում է նաև խորհրդատվություն, բաց է մոր գաղափարների առջև և պատրաստ համագործակցության իր 30 կամավորների անող բանակի հետ միասին:

Ձրուցեց  
ՏԱՐԻՍԱ ԲԱՂԱՅԱՆ

## ՊԿԿՏ. ԱՆԻ ԶԱՄԱՅՅԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՎ ԱՆՍԱԳԱԶՆԵԼ Ե ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊՐԱՆՉ ԿԵՐԱԿԱՆՁԱՍԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Սյուր մարդկությանը սպառնում են բազմաթիվ արհավիրքներ՝ պատերազմ, ընդհարումներ և բռնություններ, որոնք, սակայն, համայն անպատիժ են մնում: Որպես այս աշխարհի բնակիչներ՝ այլևս չպետք է հանդուրժե՞ք անարդարությունը ու անիրավեկությունը, ժամանակ է գործելու: Կյանքը բարեփոխելու հնարավորությունը պայմանավորված է աշխարհում առկա բազմաթիվ ճգնաժամերը հաղթահարելու համար կարելիացնող, փոխըմբռնում և մղիվածություն դրսևորելու մեր ունակությամբ, և մեզմիջև յուրաքանչյուրն այդ գործում ներդրելու համար որոշակի ներուժ ունի: Վերջերս Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում, տեղի ունեցավ ճանաչված իրավապաշտպանների համախորհուրդի Բրաուն Գալտի և ՄԱԿ-ի ղեկավար Ֆրանսուա Ուբիդայի հետ, և քննարկվեց առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առանձին երկրների դերը:

Բացման խոսքով հանդես եկան գիտա-ժողովի նախագահողներ ղեկավար Ուբիդայ և դոկտ. Անի Քալայանը: Վերջինս կարևորեց մարդու իրավունքների վերականգնման գործում մտքի, մարմնի և հոգու միասնականությունը:

Գիտաժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին հայ լրագրող Դրամու Դինգի հիշատակը, ով սպանվել էր Ստամբուլում ժողովրդավարական գաղափարների և ազատ խոսքի համար: Նշվեց, որ պատմությունը տեղի ունեցել է պատասխան և ի հետևանք սերունդներում լուծում չստացած ողբերգության Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի, հույների և այլ քրիստոնեական փոքրամասնությունների նկատմամբ թուրքական պետության իրականացրած եղեռնի: Այնուհետև դոկտ. Քալայանը խոսեց աշխարհում տեղի ունեցող անարդու իրավունքների բազմաթիվ խախտումների մասին, այդ թվում՝ երեխաների նկատմամբ կոպտ վերաբերմունքի, Ռուսաստանում սեռական շահագործման նպատակով իրականացվող մարդավաճառության, որի զոհ են դառնում առավելապես քրեները, հայերն ու առևտարակ քրիստոնյաները:

Նշվեց, որ մեծ բռնություններից տուժածներին աջակցելու համար անհրաժեշտ է ցուցաբերել կենսաօգնություն-սոցիալական և հոգևոր աջակցություն:

Աղբյուրը՝ «Իմաստալի աշխարհ» լրագիրը  
Հեղինակներ՝ ՔՐԻՍՏԻԱ ՌԻՒՊՈՒԻ  
ՋԵՄԿԱ ՓՅՈՒՏՈՒՆ

# ՏԱՄԸ ՕՐԵՐ, ՈՐ ՑՆՑԵՑԻՆ ԱԶԳԸ

Ավարտվեցին նախագահական ընտրությունները: Թվում էր, թե «ընտրական մարտերից» հետո հասարակությունը կվերադառնա իր առօրյա կյանքին: Դրա համար լուրջ հիմք էր հանդիսացել միջազգային դիտորդների դրական գնահատականը, որոնց կարծիքը մեզ մոտ և արտերկրում ընդունվում է որպես «վերջին հաշիվ» ճշմարտություն:

Գաղտնիք չէ, որ ետխորհրդային տարածքում «ժողովրդավարության արևմտյան տատնդարտների պահպանների» կարծիքը հազվադեպ է համընկնում ազգային ինքնատիպության բարոյական հիմքերը համընդհանուր գլոբալացումից պաշտպանող արևելաստիական հասարակության ներկայացուցիչների կարծիքի հետ:

Սակայն հանրապետության ողջ հասարակության համար ընտրական «փորձությունը» դեռ միայն «սկիզբն» էր, քանզի «վերջը» նախանձելի համառության պատրաստվում էր ոչ փայն հայրենական «քաղաքական խոհանոցում», այլև նրա սահմաններից դուրս:

Մեր երկրի նորագույն պատմության ողջ ընթացքում ընտրություններից հետո (ցանկացած մակարդակի) չի եղել մի դեպք, երբ պարտված կողմը չներդրի հարթուղի անընդհատելի մեթոդներ կիրառելու մեջ մոռանալով սեփական «մեղքերի» մասին: Այս բոլոր գործընթացներն ընթանում են ժողովրդավարության կարգախոսների զորի տակ և հասարակական-քաղաքական որոշակի շրջանակներում ստեղծում արդար պայքարի «աուրա»:

Միայն 2007 թվականի մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ քաղաքական ուժերի առաջնորդների մի մասն ընդունեց իր պարտությունը, և հասարակական-քաղաքական կյանքի նման զարգացումը որոշ չափով հույս էր ներշնչել ապագայի հանդեպ:

Սակայն 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների «քաղաքական քատերաբեմում» «նոր դերակատար» էր հանդես եկել ի դեմս Լևոն Տեր-Պետրոսյանի: Հասարակական-քաղաքական շատ ուժերի թվում էր, թե նախկին նախագահի քաղաքական «հարությունն անելությունից» չի հանգեցնի ողջ այս հասարակության և ազգի ողբերգական ցնցումների, ինչ ավելին, նրա առաջին քայլերը ուղղված էին քաղաքական համաձայնության հասնելուն:

Հայրենական սցեհումի «հասարակական հիշողությունը» շատ կարճ է չդադարող արտագաղթի և սերնդափոխության շնորհիվ: Իսկ բնակչության որոշակի մասի «հասարակական բանականությունը» դեռևս ծայրաստիճան անբարենպաստ սոցիալ-կենցաղային պայմանների արդյունքում և իշխանավորների ու նրանց շրջապատի որոշակի մասի ներկայացուցիչների, մեզմ առած, անպատկառ վարքերաբերի և կենսակերպի համայնապատկերի վրա ընկալունակ դարձավ հոգեբանական ձեռնածությունների նկատմամբ:

Ընդ որում՝ պետք է նշել, որ 1988 թվականից սկսած՝ նպատակաուղղված քարոզչական-պրոպագանդիստական աշխատանք էր տարվում ներազգային թշնամանքի հրախրման ուղղությամբ՝ հայրենական և արտերկրի ուժերի կողմից, որոնք շահագրգռված էին հայկական պետականության արտաքին քաղաքա-

կանության վերակողմնորոշման մեջ:

Երկրում տիրող սոցիալ-հասարակական իրադրության պայմաններում բնակչության որոշակի մասը մոռացության էր մատնել, թե մարդկային, հոգևոր, մտավոր և նյութական ինչպիսիք արժեքներ զոհաբերվեցին ՀՀ-ն առաջնորդների կողմից իրենց պատվամոլ և շահադիտական նպատակների իրականացման համար:

Ցավալի է, սակայն պետք է նշել, որ երկրի բնակչության որոշակի մասը (տարբեր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով) չկամեցավ տեսնել ավանհայտը՝ երկրի քառերաբեմում հայտնվել է «վերակենդանացած» ՀՀ-ն, որը հին «ազրեսիվ-շահադիտական գավառական» գաղափարախոսությունը քարմնացրել էր նոր բաղադրիչներով՝ «ազրեսիվ-մարտնչող ռևանշիզմով» և «ներազգային ֆաշիզմով»:

Թարմացված ու լուրջված գաղափարախոսությունը պահանջում էր նախընտրական քարոզարշավի նոր տեխնոլոգիաներ, այն է.

- Ազգամիջյան և ներթոնիկ թշնամանքի հրահրում.

- Բնակչության առանձին սոցիալական խմբերի առճակատում.

- Տարբեր սերունդների միջև անհանդուրժողականության հրահրում.

- Գործողություններում, ինչպես նաև ելույթներում ամենաթողության հրապարակային ցուցադրում.

- Պրովոկացիայի համընդհանուր կազմակերպում.

- Բնակչության զանգվածային հոգեբանական զոմբիացում.

- Բնակիչների հոգեբանական և ֆիզիկական ահաբեկում.

- Բնակչության զանգվածային մոլորեցում և այլն:

Վերոնշյալ ուղղություններում տարբեր տեխնոլոգիաների բավականին գրագետ կիրառման արդյունքները երկար սպասել չտվեցին: Զարմանալի չէ, որ «մտավորականների» մի մասը, մեր հայրենակիցների նկատմամբ «ռասայական» անհաշտությանը թունավորված, հարեցին որակապես նոր ՀՀ-ին: «Շարժման» մյուս բաղադրիչը երիտասարդության մի մասն էր, որը «էլիտար» հռչակվեց արտերկրում ստացած կրթության և ինքը շուրջօրյա միտնջկային մարաթոնին մասնակցելու համար: Այս խմբում ընդգրկված էին ինչպես ուսանողներ, այնպես էլ բարձր դասարանցիներ և հասարակական պահանջվածություն չունեցող երիտասարդներ: Սոցիալապես ոտնահարված ամենացից ստեղծվեց «հասարակական խոյի» ավանգարդ, որի դերն ամբողջի համապատասխան հոգեբանական տրամադրության ձևավորումն էր (այսպիսի «խոյախարման կառույցները» ժամանակին ավերեցին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն արտահայտելով «ժողովրդի կամքը»): Սակայն ձևավորված «Շարժման» վերոնշյալ բաղադրիչները չզիտեին, որ իրենց թիկունքում ստեղծվում էին «զորային ջոկատներ» տարածքային սկզբունքով, որոնք «սեփականազոկիչների սեփականազոկման» կարգախոսի ներքո «ժողովրդավարական մեթոդներով» պետք է դեպի իշխանություն ճանապարհի հարթեին Լևոն Տեր-Պետրոսյանի համար:

«Շարժումն» իր իրազեկիչներն ու գաղտնի կողմնակիցներն ունի իշխանության և քաղաքացիական հասարակ-

կության գրեթե բոլոր կառույցներում: «Շարժումը» հասավ իր նվազագույն նպատակին: «Տասը օրերի» ընթացքում բնակչության շուրջօրյա հոգեբանական մշակումը տվեց իր արդյունքը: Մայրաքաղաքի և մոտակա շրջանների բնակչության մի մասը 2008 թվականի մարտի 1-ի լույս 2-ի գիշերը վերածվել էր ամբուխի և դարձել անկառավարելի: Հետևաբար՝ այսօր կան 8 զոհ և հարյուրից ավելի վիրավորներ՝ չհաշված նյութական վնասները:

Այդ «տասը օրերը» ցնցեցին Հայաստանը:

Ներկայումս շատ է խոսվում վերջին իրադարձությունների հետևանքների մասին: Իմ կարծիքով, հասարակության հիմնական կորուստը նրա բարոյահոգեբանական հիմքերի ճգնաժամն է, որն էլ հանգեցրեց մարդկային զոհերի: Միամտություն է կարծել, թե սոցիալ-կենցաղային ծանր պայմաններում գտնվող բնակչության շրջանում ՀՀ-ի ցանած «ատելություն սերմերը» արմատախիլ կարվեն վարչական մեթոդներով (հատկապես ուժային):

Կառավարությունն առաջին հերթին պետք է վերանայի իր ներքաղաքական դոկտրինան: Կառավարման պետական համակարգի և ինքնակառավարման մարմինների բարոյականության և էթիկայի բարձրացման հարցերը պետք է զանվեցն համրապետության ղեկավարության ուշադրության կենտրոնում և ամենօրյա հսկողության տակ:

Ստեղծված իրադրության պայմաններում ամբողջատելի է շարունակել ապրել ու զարգանալ «երկաթի ստանդարտների» պայմաններում: Օրենքի գերապայությունը պետք է անկյունքաբար լինի մեր հասարակության բոլոր անդամների, հատկապես իշխանավորների համար, քանզի նրանց օրինակը լավագույն

ցուցանիշն է հասարակության բոլոր անդամների համար:

Բացի ողբերգական իրադարձությունների հիմնական և երկրորդական մեղավորներից հայտնաբերելուց՝ իշխանության բոլոր ճյուղերը պետք է ինքնաքննադատեն իրենց գործունեությունը և բացահայտեն դրանում առկա այն բոլոր պատճառներն ու բացթողումները, որոնք նպաստեցին երկրի բնակչության մի մասի մոտ մարտնչող բացասական ձևավորմանը դուրս հորդելով բանակառության սահմաններից:

Կառավարության համար մտորումների առանձին թեմա է իրավապահ մարմինների հանրեպ հասարակության անդամների վերաբերմունքի հիմնախնդիրը: Քանի դեռ իշխանության կառույցները ստեղծողները, անկախ զբաղեցրած պաշտոնից և սոցիալական կարգավիճակից, չկոխվեն իրենց վերաբերմունքը Օրենքի ներկայացուցիչների նկատմամբ՝ անկախ աստիճանից և կոչումից, ոստիկանը կմնա որպես բարոյապետ և ֆիզիկապես անպաշտպան անձ:

Անկախած, պետական, քաղաքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կարողին ձևավորման հարցերը 2008 թ. մարտյան իրադարձությունների լույսի ներքո ձեռք են բերում առաջնակարգ նշանակություն: Հասարակության յուրաքանչյուր անդամ, համաձայն բարձրաստիճան պաշտոնյայի, պետք է տեսնի ոչ թե «դասակարգային թշնամու», այլ օրինական հիմունքներով իր (հասարակության անդամի) շահերը պաշտպանող իշխանության ներկայացուցիչ:

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ  
Հայաստանի Հանրապետության  
քաղաքացի

## ՄԱՐՏԻ 22-Ն ԶՐԱՅԻՆ ԱՅԱՅԱՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ ԵՎ ՈՒՂԵՐՁԸ

Մարտի 22-ը Ջրային պաշարների միջազգային օրն է

Այս տարի Ջրային պաշարների համաշխարհային օրը համընկել է Սանտոնարոյան տարվա հետ, որը մեզ մղում է միջոցներ ձեռնարկել այն ճգնաժամային իրավիճակի հարթահարման ուղղությամբ, որում հայտնվել է երկրագնդի բնակիչների շուրջը մեկ երրորդը:

Հակասանիտարական սարսափելի պայմանների հետևանքով աշխարհում յուրաքանչյուր 20 վայրկյանը մեկ մահվան մահացության դեպք է գրանցվում: Սա՝ ի հավելումն 1.5 միլիոն կանխարգելիչ հիվանդություններից վաղաժամ մահացող երիտասարդների: Խմելու անվտանգ ջրի պակասն ու ոչ բավարար հիգիենան ամբողջ աշխարհում հանգեցնում են բազմաթիվ մարդկանց մահվան: Երեխաները, հատկապես աղիվները, հարկադրված են լինում դպրոց չհաճախել, իսկ ոչ բավարար հիգիենայի հետևանքով առաջացած հիվանդությունները սահմանափակում են չափախանութի աշխատանքային արդյունավետ գործունեությունը: Չնայած որոշակի ձեռքբերումներին՝ այս ոլորտում առաջընթացը խոչընդոտվում է բնակչության աճի, համընդ-



հանուր աղքատության և, որ ամենակարևորն է, անիրաժեշտ քաղաքական կամքի բացակայության պատճառով: Եթե մենք լուծենք այս խնդիրները, արդյունքը կզգա՞մի ոչ միայն մաքուր ջրի մատչելիության, այլև շատ այլ ոլորտներում: Ջրային պաշարների համաշխարհային օրը հնարավորություն է տալիս ուշադրություն դարձնել այդ հարցերին, բայց այս տարի եկեք չափանախակվեք տեղեկատվական-քաղաքական գործունեությանը, այլ հասնե՞ք իրական հաջողությունների, որոնք եպակառուցել կազդեն մարդկանց կյանքի պայմանների վրա:

### ԱՆՕՐԹԱ ԿԻՐԱՌՆԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ

Հարձակումի համաձայնություն, ես երկու առաջարկ ունեմ:

Ի՞նչ շատ որոշ եկավ «Իրավունք մշակույթ» թերթի 14-րդ համարում օրենսդրական ակտերից հատվածների տպագրումը: Կարծում եմ՝ այն գործնականում կարող է օգտակար լինել շատ այլ թաղաքացիների և: Քանի որ որևէ մեկը երաշխավորված չէ՝ որ իրավունքների ունեատիրան դեպքերից, ուստի առաջարկում եմ մեր թաղաքացիներին պահպանել թերթի այս և մյուս համարները, որտեղ կտպագրվեն օրենսդրության մասին կիրառելի, գործածական հատվածներ, որպեսզի հարկ եղած դեպքում կարողանան պաշտպանել իրենց իրավունքները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԱՆ ԱՄՆԱԿՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ՀՈՂՎԱԾ 8. ԱՄՆԱԿՈՒՆԻ ԻՐԱՎՈՒՆԵՆԻ ԱՊՐԱՆԵԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՐԵՐՅԱԼ**

Սպառողն իրավունք ունի պահանջել, որ ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) անվտանգ լինի իր կյանքի, առողջության և գույքի համար: Եթե արտադրողը (կատարողը) երկարատև օգտագործման համար նախատեսված ապրանքի (աշխատանքի) համար չի սահմանել ծառայության ժամկետ, ապա նա պարտավոր է պահպանել ապրանքի (աշխատանքի) անվտանգությունը՝ ապրանքը (աշխատանքը) սպառողին հանձնելու օրը սկսած՝ տասը տարվա ընթացքում:

Եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգ օգտագործման, նրա պահման, փոխադրման, օգտահանման համար անհրաժեշտ է պահպանել հատուկ կանոններ (այսուհետ՝ կանոններ), ապա արտադրողը (կատարողը) պարտավոր է դրանք նշել ապրանքի (աշխատանքի, ծառայության) պատկանելիք փաստաթղթերում, պիտակի վրա՝ մակնշվածքով կամ այլ եղանակով, իսկ վաճառողը (կատարողը) պարտավոր է այդ կանոնների մասին տեղեկացնել սպառողին:

Ապրանքի (աշխատանքի, ծառայության) կառուցվածքային, արտադրական, բաղադրագրային կամ այլ թերությունների հետևանքով սպառողի կյանքին, առողջությանը պատճառած վնասը ենթակա է հատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Սպառողի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման, եթե վնասը պատճառված է ապրանքի (աշխատանքի) սահմանված ծառայություն կամ պիտանքի:

Երկրորդ՝ խնդրում եմ թերթում հատվածաբար տպագրել «Ապառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը ամեն օր, ամեն թաղաքացիի կիրառելի է, իսկ մեկը անտեղյակ ենթե այդ օրենքի դրույթներին:

Վրոնես Հակոբյան  
Զ. Սևան

Ընթերցողի առաջարկները միանգամայն ընդունելի են. ուստի ստորև տպագրում ենք «Ապառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի առավել գործածելի հատվածները:

թյան ժամկետի ընթացքում: Եթե արտադրողը (կատարողը) երկարատև օգտագործման համար նախատեսված ապրանքի (աշխատանքի) համար ծառայության ժամկետ չի սահմանել, ապա վնասը ենթակա է հատուցման՝ ապրանքը (աշխատանքը) սպառողին հանձնելու օրից սկսած, իսկ եթե սահմանվելու օրը պարզել հնարավոր չէ, ապա ապրանքը արտադրելու (աշխատանքը ավարտելու) թվականից սկսած՝ տասը տարվա ընթացքում:

Արտադրողը (կատարողը) պատասխանատվություն է կրում ապրանքների արտադրության (աշխատանքների մատուցման) համար անհրաժեշտ նյութերի,



սարքավորումների, գործիքների և այլ միջոցների օգտագործման հետ կապված՝ սպառողի կյանքին, առողջությանը, գույքին պատճառած վնասի համար, անկախ այն բանից, թե գիտակալն է տեխնիկական գիտելիքների մակարդակը հնարավորություն տալիս է հայտնաբերել դրանց յուրահատուկ հատկությունները, թե՛ ոչ:

**ՀՈՂՎԱԾ 16. ԱՄՆԱԿՈՒՆԻ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԱՄՆԱԿՈՒՆԵՐԻ ԱՊՐԱՆԵՐԻ ՎԱՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սպառողը, որին վաճառվել է անորակ ապրանք, և եթե վաճառողը դրա թերությունների մասին նախապայման չի սահմանել, իրավունք ունի իր ընտրությամբ՝

պահանջել՝  
ա) ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ սպառողի կողմից դրանց վերացման ծախսերի հատուցում.  
բ) գնման գնի համաչափ իջեցում.  
գ) նմանօրինակ մնուլի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում.  
դ) այլ մնուլի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում՝ գնման գնի համապատասխան վերահաշվարկով.  
ե) առուվաճառքի պայմանագրի լուծում: Այդ դեպքում սպառողը պարտավոր է վերադարձնել թերություններով ապրանքը: Սպառողը իրավունք ունի պահանջել ոչ պատշաճ որակի ապրանքի վաճառքի հետևանքով իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Սպառողն իրավունք ունի արտադրողին կերպարանով անորակ ապրանքը և հետ պահանջել դրա համար վճարված գումարը:

Սպառողի կողմից անորակ ապրանքի ձեռքբերման դեպքում, որի համար սահմանված է պիտանքի ժամկետ, վաճառողը պարտավոր է այդ ապրանքը փոխարինել որակյալ ապրանքով կամ սպառողին վերադարձնել նրա վճարած գումարը, եթե ապրանքի թերությունները հայտնաբերվել են պիտանքի ժամկետի սահմաններում:

Սպառողի պահանջները քննարկվում են, եթե նա ներկայացնում է ապրանքային կամ դրամարկղային չեկ, իսկ այն կարող է լինել նկատմամբ, որոնց համար սահմանված են երաշխիքային ժամկետներ, տեխնիկական տեղեկաթերթի կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ: Վաճառողը պարտավոր է սպառողին հանձնել ապրանքային չեկ կամ գնման փաստը հավաստող այլ փաստաթուղթ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Վաճառողը (արտադրողը) պարտավոր է սպառողից ընդունել անորակ ապրանքը, իսկ անհրաժեշտության դեպքում կատարել ապրանքի որակի ստուգում: Սպառողն իրավունք ունի մասնակցել ապրանքի որակի ստուգմանը:

Եթե ապրանքի փորձաքննությունից պարզվում է, որ թերություններն առաջացել են ապրանքն սպառողին հանձնելուց հետո նրա կողմից օգտագործման, պահման կամ փոխարինման սահմանված կանոնները խախտելու, կամ երրորդ անձանց գործողությունների, կամ անհրաժեշտության դեպքում, ապա սպառողը պարտավոր է հատուցել վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոնների փորձաքննության կատարման, ինչպես նաև

դրա կատարման հետ կապված ապրանքի պահման ու փոխարինման ծախսերը:

Ստորգնման, գնի իջեցման, փոխարինման համար մեծածավալ ապրանքի և հինգ կիլոգրամից ավելի թաշվ ապրանքի տեղ հասցնելը և դրանք սպառողին վերադարձնելն իրականացվում են վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոնների ուժերով և հաշվին: Տվյալ պարտավորությունը չկատարելու, ինչպես նաև սպառողի գտնվելու վայրում վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոնների բացակայության դեպքում նշված ապրանքները կարող է իրականացնել սպառողը: Այդ դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոնները պարտավոր է փոխարինել այդպիսի ապրանքը նշված պահանքի ներկայացման օրից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոնների կողմից այդպիսի ապրանքի որակի լրացուցիչ ստուգման անհրաժեշտության դեպքում՝ նշված պահանքի ներկայացման օրից՝ 20 օրվա ընթացքում:

**ՀՈՂՎԱԾ 19. ԱՆՈՐԱԿ ԱՊՐԱՆՔԻ ՓՈՒՍՈՒՐՆԵՆԵՐԻ**

Սպառողի կողմից ապրանքի թերությունների հայտնաբերման և այդպիսի ապրանքի փոխարինման պահանջ ներկայացնելու դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոնները պարտավոր է փոխարինել այդպիսի ապրանքը նշված պահանքի ներկայացման օրից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոնների կողմից այդպիսի ապրանքի որակի լրացուցիչ ստուգման անհրաժեշտության դեպքում՝ նշված պահանքի ներկայացման օրից՝ 20 օրվա ընթացքում:

Անորակ ապրանքը պետք է փոխարինվի նոր ապրանքով, այսինքն՝ չօգտագործված ապրանքով: Ապրանքի փոխարինման դեպքում երաշխիքային ժամկետը հաշվարկվում է նորից՝ ապրանքն սպառողին հանձնելու օրից սկսած:

**ՀՈՂՎԱԾ 23. ՈՐԱՎՅԱԼ ԱՊՐԱՆՔԸ ՓՈՒՍՈՒՐՆԵՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆԵՐԸ**

Սպառողն իրավունք ունի փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը 14 օրվա ընթացքում չհաշված գնման օրը, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել:

Որակյալ ոչ պարենային ապրանքը փոխարինվում է, եթե նշված ապրանքի օգտագործման, պահպանման են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկությունները, կապարակիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև վաճառված ապրանքի հետ սպառողին տրված ապրանքային կամ դրամարկղային չեկը:

### Դարևոթյան միջազգային քրեական իրավունքի վերաբերյալ

Մարդու իրավունքների իռանդական կենտրոնը 2008 թ. հունիսի 21-26-ը Գոլվե թաղաքում կազմակերպում է Միջազգային քրեական դատարանի գործունեության թեմայով հեթերակամ ամենամյա դասընթացը: Այդ ոլորտի ճանաչված մասնագետների կարգաթիվ ինտերնալ դասախոսություններն ուսանողներին մանրամասն տեղեկություններ կտրամադրեն դատարանի կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Մասնակցության համար դիմելու վերջնաժամկետն է 2008 թ. ապրիլի 30-ը: Առցանց դիմելակմերին կարելի է ծանոթանալ հետևյալ կայքէջում՝

[http://www.nuigalway.ie/human\\_rights/icc\\_summer\\_school.html](http://www.nuigalway.ie/human_rights/icc_summer_school.html)

### Մարդու իրավունքների ամառային խորացված դասընթաց

Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի իրավաբանական վարժարանը հայտարարում է 10-րդ խորացված ամառային դասընթացը «Մարդու իրավունքներ» և «Մարդասիրական իրավունքներ» թեմաներով: Դասընթացը կկայանա 2008 թ. մայիսի 26-հունիսի 13-ը Վաշինգտոնում: Սա մարդու իրավունքներով հետաքրքրվող ամենաց համար նորարարական մի ծրագիր է, որը հնարավորություն է տալիս մասնագետներին կարճ ժամանակահատվածում հարստացնել իրենց իմտություններն ու փորձը: Դասընթացի ընթացքում կդասավանդեն Միջազգային քրեական դատարանը, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը և այլ իրավական կառույցների 33 ճանաչված մասնագետներ: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել [www.wcl.american.edu/hracademy](http://www.wcl.american.edu/hracademy) կայքը:

### Ֆեմինիստ մրցանակակրին արգելել են լքել Իրանը

Պարսկուհի ֆեմինիստ և լրագրող Փարվին Արդալանին արգելել են մեկնել Շվեդիա մասնակցելու Ստոկհոլմում մարտի 6-ին կայացած մրցանակաբաշխությանը և ստանալու Օլաֆ Պալմայի անվան մրցանակ: Նա ապրում է Թեհրանում և համոզմունք է Իրանում կանանց նկատմամբ իրավական խտրականության վերջնական ուղղությամբ գործող Հանուն իրավահավասարության քաղաքացիական հիմնադրամի անդամ և Կանանց մշակութային կենտրոնի ՀԿ-ի անդամ:



Օլաֆ Պալմայի անվան ամենամյա մրցանակը կոչված է խթանելու խաղաղությունն ու զինաթափումը և պայքարելու ռասայական խտրականության և այլաույսությունների դեմ: Այն տրվում է ոլորտում նշանակալի ձեռքբերումների համար նրանց, ովքեր գործում են Օլաֆ Պալմայի ոգով, որը եղել է Շվեդիայի վարչապետ և սպանվել է 1986 թ.:

«Միջազգային համաձայնություն» կազմակերպության մամուլ հաղորդագրություն

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱՆՀԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դպրոցում գեղագիտական դաստիարակության համակարգերի վերակառուցման, արվեստի նկատմամբ վերաբերմունքի վերանայման խնդիր դնելով՝ ժամանակն է՝ մեզ հարց տանք...

են, որ մարդու վարքագիծը որոշվում է ոչ միայն գիտելիքներով, այլև հավասարապես աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքով, գեղագիտական իդեալներով, նախափորձություններով...

թյուն է մարդկանց ու բնության նկատմամբ վերաբերմունքի բարոյագիտական սկզբունքների լիարժեք յուրացում:

պատճառով: Ըստ երևույթին, ժամանակն է ընդունել, որ գիտատեխնիկական ոլորտի զարգացումն անգամ առանց համապատասխան բարոյական զարգացման չի կարող չհանգեցնել մասնագիտական մեղմության...

Հոգևոր կյանքի հարստությունը մեծապես պայմանավորված է անհատի գեղագիտական զարգացմամբ, ուժգնորեն է խորապես զգալու, բնության և հասարակության հետ մերդրված, բազմակողմանի կապի, շփվելու ունակությամբ:

կությունը: Հաճախ արվեստի և լուսավորության գործիչները լիարժեքորեն չեն գիտակցում խնդիր կարևորությունը:

հսնդրը քննեք երկու կարևորագույն տեսանկյունից. գեղագիտական և գեղարվեստական զարգացման ազդեցությունը մարդու բարոյականության ձևավորման վրա: Երկուսն էլ չեն կարող լուծվել առանց հասարակության յուրաքանչյուր անդամի գեղագիտական և գեղարվեստական զարգացման գործի վերահսկման: Երկու խնդիրներն էլ դպրոցի սահմաններից դուրս անդուլտելի են:

Գիտատեխնիկական հեղափոխության ընթացքը երբեմն իր հետ բերում է վտանգավոր մի մոլորություն, թե իբր սոցիալական և անձնական կյանքի բոլոր խնդիրները կարելի է վճել՝ հենվելով գիտելիքների (ինֆորմացիա, հիշողություն) ծավալի ընդլայնման, տրամաբանական դատողության զարգացման վրա:

ճղգեպես չհատուցացած, գեղագիտական տեսանկյունից անզբաղեց մարդն առանց ընտրության գործածում է ամեն տեսակի գեղագիտական փոխանյութ, ինչպիսիք ճանապարհներով էլ որ դրանք իրեն հասած լինեն:

Այդ կործանարար ազդեցությանը հակադրվելու ամենաիրատեսական ուղին մարդկությունից մնա՝ «արվեստի» նկատմամբ հակակրանք մշակելն է, ճաշակը զարգացնելը, իսկական արվեստը ընթացնելու, նրան հաղորդակից լինելու, գեղագիտական բարձր պահանջություններ և դատողությունների ինքնուրույնության ձգտում և կարողություն դաստիարակելն է:

Յուրաքանչյուր անհատի լիարժեք գեղագիտական դաստիարակությունը «չբեղություն» չէ, այլ անհատականության բազմակողմանի, ներդաշնակ զարգացման անհրաժեշտ պայման, որի բացակայության դեպքում չի կարող լինել լիարժեքորեն զարգացած մտածողու-

նախափորձություններով, բարոյագիտական սկզբունքների լիարժեք յուրացում: Մանկավարժական լայն շրջաններում երբեմն կարծիք են հայտնում, թե գեղագիտական դաստիարակության էությունը գեղարվեստական ընկալման նրբության և այլ հաճելի, սակայն ոչ պարտադիր, «հավելյալ ինտելիգենտություն» մեջ է, ուստի այդ դաստիարակությունը բոլորի համար չէ, որ անհրաժեշտ է, և հարկավոր է միայն հանգստի կազմակերպման համար:

Մեհափոք գեղագիտական զարգացման խնդիր լուրջ վերլուծությունը մեզ համոզում է, որ, փաստորեն, դա կյանքի երևույթների նկատմամբ մարդու վերաբերմունքի մակարդակն է, այն բարձրագույն մակարդակը, երբ ընդհանուր շահի և ճշարտությունը վերափոխվում են խորապես անհատական, ազատ գեղագիտական հաճույքի, իսկ հասարակական վնասարարությունը, կեղծիքը՝ անհաղթահարելի արգահատանքի:

Գեղագիտական դաստիարակության այդ մակարդակը գործնականորեն հնարավոր է ցանկացած ուղղությամբ, այդ թվում՝ բարոյականության ոլորտում, երբ վատ արարքներից խուսափում են ոչ թե պատժի ահից, այլ այն պատճառով, որ դրանք «ինքնըստինքյան» արգահատանք են առաջացնում (ինքն այդ միտումով էլ Մ. Գորկու գեղագիտությունը անվանեց «պապազայի բարոյագիտություն»): Հնարավոր է նաև աշխատանքում, երբ մարդը մոռանում է շահի, փառքի մասին, և աշխատանքն իրեն է սկսում մեծ իրավաբան

կարծիք են հայտնում, թե գեղագիտական դաստիարակության էությունը գեղարվեստական ընկալման նրբության և այլ հաճելի, սակայն ոչ պարտադիր, «հավելյալ ինտելիգենտություն» մեջ է, ուստի այդ դաստիարակությունը բոլորի համար չէ, որ անհրաժեշտ է, և հարկավոր է միայն հանգստի կազմակերպման համար:

թերագնահատումը հանգեցնում է անհատի հուզական, բարոյական և գեղագիտական զարգացման բերկության: Գիտակցելով այդ՝ պե՛տք է արդյոք շարունակենք հաշտվել այդ թերագնահատման արդյունքների հետ, որոնք երբեմն տեղ են գտնում և ուսումնական պլաններում, և դպրոցների ծրագրերում:

ԱՆԱՀՅՏ ԿԻՐԱՎՈՐՄԱՆ մանկավարժական գիտությունների ղկկոոր

ՃՃՄԱՐՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

← էջ 1 Պահք է:

Յավոք, քրիստոնեությունը շատերիս համար սահմանափակվում է անաղոթք մոմավառությամբ, Օտղկազարդի ուռեմու ճյուղերով, օրհնված ջրով կամ խաղողով ու Ջատկի կարմիր ձվով, որոնց համար երբեմն չենք խորշում անգամ եկեղեցուն:

Շատերն ապշել էին Ազատության հրապարակում ահազանցող բազմությունից ու այդ մարդու մեջ նորից փորձեցին «փրկելի» տեսնել կանգնելով նրա կողքին կամ հրապարակում՝ նպաստելով դեպքերի ընթացքին... Եվ խռովություն եղավ համուն... արդարության, սպանություններ, իրկիզուններ ու թալան՝ համուն... ճշմարտության: Ձավեշտ է: Պատմությանը հայտնի չէ գեթ մեկ օրինակ, երբ այդպիսի միջոցներով արդարության ու ճշմարտության են հասել: Ամառուր ձեռքերով ազնիվ աշխատանք կատարելն անհնար է:

իրմշտել միմյանց՝ վշտացնելով տեսարանը դիտող, թևաթափ հոգևոր հայրերին... Մակայն եկեք դառնանք մեր մեծերին ու լսենք նրանց ձայնը: «Քննեցեք Չեր սիրող և ճայեցեք, թե կա՞ արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանան մեր այդ հոգևոր Հայաստանը. եթե չկա, ապա գուր են մեր ջանքերը նյութական Հայաստանի համար...»- գրեթե դար առաջ գրել է Վահան Տերյանը: Ե՛րբ ենք անսուլու այս ճշմարտությանը:

Մի՛թե ակնհայտ չէ, որ հենց հոգևոր Հայաստանի սկզբունքներն է պատճառը, որ շարունակ չարիքներ են ճարակում մեզ: Մենք հաճախ նյութական աշխարհից այն

կողմ ոչինչ չենք տեսնում, նյութական Հայաստանից բացի ոչինչ չենք ուզում ու դեկավարվում ենք Քաջ Նազարի նշանաբանով «կեր, խմի, թե՛ք արա», որովհետև խոսքով ենք հավատում Հայրությանը, սրտի խորքում չենք հավատում իրական կեցիկների կյանքին: «Եղբայրներ, ուզում ենք, որ մեռածների մասին ճշմարտության իմանք, որպեսզի չսխալվենք ուրիշների մեծ, որոնք որևէ հույս չունեն...» (Ս. Թա. 4:13): Մակայն եթե Առաջալի խոսքին էլ չենք հավատում, քահանայի խոսքին էլ չենք հավատում, եկեք անամբ մեր մեծերի՝ Նարեկացու, Աբովյանի, Թումանյանի, Տերյանի, Իսահակյանի ձայնին ու հավատանք, ինչպես հավատացել են նրանք: Չէ՛ որ սիրում ենք այս ու այնտեղ պարծենալ նրանցով... «Լկա բազում տուտ մարդարեմեր պիտի ելնեն և շատերին մոլորեցնեն» (Մատթ. 24:11):

Միայն ու խաղաղման շրջան է, բայց խռվարարը դեռևս չի հազգեցել թափված արյունով... Նրա խռվոքը շատ խորն է, այնքան խոր, որ ամիսով ու ամբարտավանությամբ մեծապես իր սևավոր առանձնատանը դուռը հարդուրյամբ ու արդթքով եկած վեհափառ հայրապետին: Տոհմակյաց Արտաշես ար-

բայից խռված նախարարներին մնամբելով, որոնք 428 թ. դիմեցին պարսից շահին՝ հայոց բազմաթիվ զանգվեց անելու խնդրագրով, մերօրյա խռվարարն ամենահնարավոր խնդրագրերով Հայաստանը հրաժեցնում է տարբեր առյուծների փորձանքություններին...

Միայն է, սիրելի եղբայրներ ու քույրեր: Եկեք հրաշքերը չպահանջենք հավատալու համար, բանգի հրաշքը մեր աչքերի առաջ է՝ բազում գիշատիչների ժամերներից փրկված մեր անկախ Հայրենիքը. ի՞նչ գիտենք, գուցե նորոգված ու փրկված նաև Նարեկացու, Տերյանի ու Թումանյանի արդթքներով: Քանի՛ սերունդներ են երազել Անկախ Հայրենիքի մասին, բայց չեն տեսել: Մենք արժանացել ենք տեսնելու այդ երազի իրականացումը...

Եղան իրողություն է: Ապաշխարել, դասեր քաղել ու գործել է պետք: Մանդրոլոքները վկանում են վերկից: Պետք է սրբել հայոց պետականության ժաման առաջին հերթին սեփական մակարդակն է Հայրենիքի ու պետականության շահի հետ անհամատեղելի բոլոր բացի-նեցիկ և նորկի կերտելն ընդամենը մեկ միջին քաղաքի բնակչություն ունեցող մեր Հայաստան երկիրը: Հուսանք, որ նոր ձևավորվող իշխանությունը դասեր քաղելով կզնա այս ճանապարհով: Այդ դեպքում նաև Ազատության հրապարակում հավաքված, երկրի առողջացման համար անկեղծորեն մտաժող հազարավոր ազնվագույն ու արտագնա մարդիկ միայն կողոտեն այդ

բայերը... Հակառակ այնքան մեկ տարի հետո ավելի հզոր ակիք կարող է սրբել տեսնել ամեն ինչ: Հայաստան երկիրն ու նրա քաղաքացին իրավունք ունեն ազնիվ պաշտոնյաներով կառավարվելու ու առաջընդունելու: Դա է հայ ժողովրդի պահանջն ու ցանկությունը:

Յավոք, քրիստոնեությունը շատերիս համար սահմանափակվում է անաղոթք մոմավառությամբ, Օտղկազարդի ուռեմու ճյուղերով, օրհնված ջրով կամ խաղողով ու Ջատկի կարմիր ձվով, որոնց համար երբեմն չենք խորշում անգամ եկեղեցուն իրմշտել միմյանց՝ վշտացնելով տեսարանը դիտող, թևաթափ հոգևոր հայրերին...

Մարդկային իրավունքները համընդհանուր և անկասկածելի են: Հետևաբար՝ իրավունքով, արդարությամբ ու արդարադատությամբ պետք է գործել մշտապես, և մասնավորապես մարդու իրավունքների անջուրթյամբ կապանված բոլոր անձանց նկատմամբ:

Եկեք խաղաղությանը ու սիրով լցվենք միմյանց նկատմամբ, ինչպես Նարեկացին է վերաբերվում անգամ «նրանց, որոնք թշնամի են մեզ»:  
«Սուսուականակն աղերսանքներով՝ ի բարին հիշիր մարդկային ազգից եվ նրանց, որոնք թշնամի են մեզ. Տուր լիակատար քավություն, գթա՛ծ, ու որդրմունքներ» (Վատյան ողբերգությանը, Բան 29 / Ս) Եկեք արժանի լինեք այսօրվան ու չխտորվեք ճշմարտի ճանապարհից:

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# Հոգեւոր

## ՏԻՐՈՉ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ԳԱԼՍԻԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

ՎԱՀՆՆ քահանա ԱՉԱՐՅԱՆԻ քարոզը  
Գալստյան կիրակիին Վանաձորի Ս. Նարեկ առաջնորդանիստ եկեղեցում

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մեզ համար ցավ է, որ մեր երկրում խռովություն եղավ, և մեր ժողովրդի զավակներից զոհեր եղան:

Այսօր Մեծ Պահոց շրջանի վեցերորդ կիրակին է: Խորհրդանշական, մարտունակ փրկող, փրկելու եկած Քրիստոսի գալստյան կիրակին բացառիկ փառաբանության օր է:

Անցնում են շաբաթները իրար հետևից՝ մեզ առաջնորդելով խորհուրդներով ապրելուն: Զենց դրա համար էլ ամեն մի շաբաթ առաջնորդում է կրկին դառնալ ու արժանազալ դրախտային երջանկությանը: Այնտեղ, որտեղից ելել էր մարդը, լքել իր հայրենիքը: Ու կրկին իր հոգևոր հայրենիքն է դառնում մարդը: Այս անգամ արդեն ապաշխարության, իր մեղքերի խարազանման գնով, իրեն երկնքին անարժան համարելու գնով: Ու երբ տեսնում է, որ Աստված անաճառանի համար ևս դուռ է բացում, էլի հնարավորություն է տալիս, ավելի է խեղճանում մարդը, թե որքան հզոր է նա, որքան դռներ է բացել, հայրական ինչպիսի գթաբանություն կա նրա մեջ, որ պատրաստ է մեր փրկության համար աշխարհ գալու: Զենց սա էլ այս վեցերորդ կիրակիի մեծագույն խորհուրդն է:

Խորհուրդն այն է, որ ինչ-որ բանի սպասելիս Աստված մեզինք երբեք երես չի դարձնում, իսկ մենք սպասում ենք փրկությանը, լույսի տարածմանը: Ես նախ մեզ

արտաքսեց դրախտից, կանգնեցրեց դրախտի դիմաց: Այսօր բոլոր կանգնած ենք դրախտի՝ խորանի առջև, ուր Աստված պատարագում էր հանում մարդկության, սեր, շնորհ ու խաղաղություն սփռում մարդկության համար: Մենք անույս թաղված էինք մեղքերի, խավարի մեջ: Աստված հաջորդ կիրակի ասաց. «Այնքան էլ խավար չէ. եթե հուսաս ու դառնաս, ոչինչ կորած չէ, ես կընդունեմ քեզ»: Մյուս շաբաթ ասաց. «Այո, ընդունելու եմ քեզ, բայց արդեն պիտի գործես, ցույց տաս, որ հավատը կենդանի է, որ պատրաստ ես գոհաբերության՝ արժանանալու Տիրոջ արքայությանը: Զաջորդ քայլը մեղա գալուց հետո վերափոխվելն է»:

Աստված ասաց՝ ես անիրավ դատավոր չեմ, զթառատ եմ ձեր խոսքերի հանդեպ, երբ արդթեք, պիտի լսեմ, բայց անբողջ հուսալով պահեք շրջանում կատարեցեք: Զինա հասել է ժամը իմանալու, թե Աստված ինչ ողորմություն է սփռելու մեզ վրա: Ամեն ինչ արեցինք իր ասածի նման, հինա ի՞նչ ողորմություն է տալու: Աստված իր սերն է սփռում աշխարհում: Գալստյան այս կիրակին խորհրդանշում է նրա առաջին գալուտը: Ասում է՝ պահե՛ք արժանի է, ապաշխարությունը ընդունելի է: Դու անընդհատ մեռե՛ք երբ ինձ տարածեցիր, եկար դեպի ինձ, ես էլ դեպի քեզ եմ խոսքովել աստվածային անեղք, անափ, անսկիզբ ու անվերջ բարձունքից:

Գալստյան այս կիրակին խորհրդանշում է, որ եթե Քրիստոս գա և մեզ տեսնի այսպիսին, վայ է մեզ: Վայ մեզ, կույր առաջնորդներ, որ ասում եք՝ ով երդվի տաճարի վրա, երդվում է նրա ընծայի վրա, չգիտեք, որ տաճարն ավելի սուրբ է:

Ինչու՞ ենք տոներ տոնում, պարզապես ժամանակ ենք վատնում կամ ցնծում: Եկեղեցի ենք համախուս, որ Ավետարանի խոսքը մեզ ապրեցնի, որպեսզի Տիրոջ համար կանգնենք իսկապես ճշմարտությանը: Փորձում ենք օրինականությունը պահպանել, իսկ թե ինչու են օրենքն ու կարգը սահմանված, հաճախ մոռանում ենք: Մոռանում ենք, որ տաճարի դռները բաց են, կարելի է մտնել, բայց ինչպե՞ս մտնել: Տաճար պետք է գալ՝ պահպանելով կանոնը: Երանի՛ր այն օրը, երբ բոլոր կանոնաբե գլխաշորով կտնենք եկեղեցի, դա կլինի մեր ազգի փրկության առաջին օրը, երանի՛ր ինձանց, թե ինչպիսի հազուատով է պետք մտնել եկեղեցի. դա էլ մեր ազգի փրկության երկրորդ քայլն է լինելու: Երանի՛ր՝ տաճարները լեցուն լինեն մարդկանցով: Դա կլինի մեր ազգի փրկության երրորդ քայլը: Պահոց օրերը ցնծությանը կդիմավորենք մենք և ոչ թե կտկարանք:

Քրիստոս ասում է՝ ձեր պնակի ներսը մաքրեք, դուք է՛ք մեր ներսը մաքրեք, որպեսզի հոլորը մաքուր լինի: Դուք աշխատում եք մաքուր պահել տեսանելի, այ-

**ՀՈԳԵՎՈՐ ՏՈՆԱՑՈՒՅՑ**

Մարտի 22 - Ավագ շաբաթ:  
Ծրագալույց

Մարտի 23 - Սուրբ Ջատիկ  
Մարտի 30 - Կրկնագատիկ

Գինջ ներսը լի է գարշահատությանը, կեղծավորությամբ:

Երանի այն օրը, երբ Տերը կգա, կասի՝ իմ սիրելի ժողովուրդն էք, երկնքի արքայություն պիտի ընդունեմ ձեզ ու կրած տառապանքը, նեղությունը, քանգի ներսը սրբեցիք, որ դուրսը մաքուր լինի:

Այսօր շատերը չեն հասկանում, թե ինչ է աստվածապաշտությունը, ճշմարտատարժեքը, և այդ արժեքները կոխտուում են ամեն օր: Աճյապաշտությանը պարզ սերունդ ենք մեծագույն: Քրիստոնեական արժեքները ոտնահարվում են: Անգամ չգիտենք եկեղեցի մտնելու կարգը, էլ ուր մնաց քրիստոնեական արժեքները գնահատել:

Թող փառավորվի Տիրոջ մեծագույն, հզոր անունը, Տիրոջ, ով մեզ կերակրում է իր խոսքով, հոգու գործությամբ, որ կրթի ու գորացնի ամենքիս, ողորմած լինի մեր հանդեպ, որպեսզի հասցնենք ապաշխարությանը միշտ ապրել ու ասել՝ Ների՛ր և մեզ, և մեր հայրերին: Թող Տիրոջ հոգին այս մեկ շաբաթ և գորացնի մեզ՝ ապրելու գալստյան մեծագույն փառքով, մեզ գորացնի, ուժ ու կարողություն տա՝ մաքրագործելու, քանգի ամեն տուն մեկ հոգով սուրբ է:

ԱՄՆ:

## Հապրված եք. Ապաշխարությունը և մարտի

Մեր Տերը ցանկացավ, որ ապաշխարությունը խոսքով ու արդյունքով կատարենք: Խոսքով կատարված ապաշխարությունն այն է, որի դեպքում ասվում է. «Մեղավորի մահը չեմ դատապարտում, այլ նրա դարձի գալու ու ապրելու» կամ «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգևածներ, և ես կհանգստացնեմ ձեզ»: Իսկ արդյունքով՝ ինչպես եմովքն ապաշխարությանը մուտք գործեց երկինք, Մասնի մեղքերը ներեց, Դավիթ թագավորությունը հաստատեց, մաքրավորին արդարացրեց, անառակից երես չդարձրեց, ավագակի առջև դրախտի դռները բացեց, Պետրոսին, որ տկար գտնվեց, երեք խոստովանությանը բժշկեց: Ու ոչ միայն մարդուն մերվելու հնարավորություն տվեց, որ թեև մեղքերի մեջ դիվախար է, բայց ապաշխարանքի մեջ՝ դյուրադարձ. ապաշխարության շատ օրինակներ կան երկրում և երկրի վրա: Երբ Մովսեսը գավազանը գետնին գցեց, այն օձ դարձավ, երբ մեռած առավ, դարձյալ գավազանի վերածվեց: Սա ապաշխարության նշան է, որովհետև ուղիղ և հաստատուն գավազանը մարդն է, որ երկրում վերածվում է օձի, սակայն ապաշխարելով վերստին դառնում է գավազան: Մաքրող գավազանը, որ ծաղկեց, ապաշխարության նշան էր, որովհետև ծառից կտրված գավազանը չորացավ, իսկ գիշերը դարձյալ տաքարուն դաղաբույս ու ծաղկեց:

Օրինակ, երբ օձի մաշկը խորշումում է, նա աստիճանաբար մեղ տեղեր է մտնում՝ ազատվելով ծերացած կաշվից: Նույնպես և մեր մեղքը, որ ապակամության զգեստն է, պետք է ապաշխարանքի նեղության միջով անցնի, որն է՝ քաղց, ծորավ, չարչա-

րանքներ: Ապաշխարության օրինակներ կան նաև բնության մեջ: Օրինակ՝ ծառերը, որ գարնանը կանաչում ու պտղովներով զեղեցվում են, իսկ ձմռանը տերևաթափվում են՝ զրկվելով զեղեցկությունից: Մարդն էլ է զեղեցկանում արդար գործով, մինչդեռ Աստծո սիրուց ու հավատքից առաջելով՝ աստանայական հոգմն է նրան պարունում՝ զրկելով բոլոր բարություններից:

Ապաշխարությունը երկրորդ ավագան է՝ մեր մեղքերը վճանալու համար. բոլոր զույգ աչքերից թափված արտասուքն է՝ հոգին ու մարմինը սրբագործող: Մեղքի խոստովանությունն ամենատարբեր դրության խոստովանությունն է, մեղքն ատելը՝ աստանայից իրաժարվելը: Ինչպես որ մկրտության ժամանակ սկզբնական ու ներգործական մեղքերից ենք ազատվում, այնպես էլ այստեղ ապաշխարությանը մահացու և ներելի մեղքերից ենք մաքրվում: Դրա համար է ապաշխարությունը երկրորդ ավագան՝ մկրտության ավագանից հետո:

Ի վերջո, ի՞նչ է ապաշխարությունը: Ապաշխարությունը գործած մեղքերի հանդիմանությունն է, այսինքն, երբ երբեմն մտաբերում ենք մեր կատարած քայլերը, տրտմում ու զղջում ենք: Ապաշխարելը հրգու համար է, որ զղջում է սխալի համար, իսկ ապաշխարելը՝ մարմին: Այս երկուսով, այսինքն՝ գործած մեղքերի համար տրտմությանը և առ Աստված արդողներով մարդը մոտենում է Աստծուն, հաճելի դառնում նրան:

Մեղքն Աստծո շնորհների և ուրախության լույսը նվազեցրեց՝ անցնելով տրտ-

մությունների և չարիքների խավարը: Ապաշխարելը մեղքի ու տրտմության առաջացրած խավարն է փարատում, իսկ աղոթքը մեր հոգիներն ուրախություն լույսով ու շնորհներով է լցնում: Այդ ժամանակ մարդու սիրտը միշտ ուրախությամբ ցնծում է, դեմքը՝ զվարթանում, և նրա սրտում տխրությունն ու թախիծը տեղ չունեն, ինչպես առաջյան է գրում. «Ուրախ եղե՛ք Տիրոջը, դարձյալ եմ ասում՝ ուրախ եղե՛ք»: Մոլորման Իմաստունն էլ ասում է. «Իշխանի հոգին պիտի ելնի քեզ վրա: Քո տեղը մի թող նրան»:

Աստանան երկու ձևով է մարդուն գայթակրում՝ նախ հոգեկան և ապա մարմնական մեղքերի մեջ նետելով: Զոգեկան մեղքեր են անբարոյականությունը, սնափառությունը, նախանձը, բարկությունը, ատելությունը և այլն, իսկ մարմնականը՝ ծուլությունը, ազախությունը, գողությունը, անառակությունը և այլն: Սա մոլորության առաջին ձևն է: Երկրորդն այն է, որ մեղք գործելուց հետո մարդն ընկնում է հուսահատության և անհոգության մեջ: Զետևաբար հարկավոր է, որ մարդն զգույն ու պատրաստ լինի գործի կատարելուց առաջ, որպեսզի չմոլորվի՝ մեղքի մեջ ընկնելով: Առաջին ասում է. «Աղաչանքը մեծամեծ մեղքեր է ներում», այսինքն, երբ աստանան քեզ մեղքի որոգայթն է նետում, մի հուսահատվիր, աղոթե՛ք ու աղաչանքներ անուղիղ Աստծուն, և նա քո մեծ ու փոքր մեղքերը կների: Եթե ուրաքել ես Տիրոջը, Պետրոսի նման արաչի՛ր նրան դռն արտաբերել, և կներվեն մեղքերը: Եթե արյուն ես հեղել, ինչպես Դավիթը, քո մահմուն հեծությանը արտասպիր, և կներվեն

մեղքերը: Զիշի՛ր, որ մաքրավորին տաճարում արդարացրեց, ավագակին մի խոսքով դրախտ մտցրեց, Քրիստոսին տեղով խոսեց ԴուՆկիանոսին իր աշակերտը դարձրեց, Ստեփանոսին քարկոծած Պողոսին իր առաջյալը դարձրեց: Զիշի՛ր, որ Քրիստոս բոլորից չէր գառուն, մեղավորների հետ էր սեղան նստում, կյուրերին լուսավորում էր և խուլերին վերադարձնում էր սելու կարողությունը: Զավաճող հայցելու դեպքում բոլորին անձախանձ շնորհուն էր խնդրած:

Այդ, երբ երկնավոր Զայրո տեսնում է մեզ՝ մեղքից խոցվածներին, աստանայից փախածներին, իրեն ապավինածներիս, ինչու՞ պիտի վաճի, քանգի ասել է. «Ով ինձ մոտ է գալիս, դուք չեմ համի»: Նա ընդառաջ է ելնում, ինչպես անառակ որդուն, համբուրում մեզ՝ մեր արտասուքները սրբելով, մեզ աստվածային բազուկների մեջ առնելով: Այդ ժամանակ աստանան այլևս ի գորու չէ մեզ խաբել:

Այժմ, թեև մեղավոր ենք, մեղքից դառնալով՝ մեր Զոր գրկում ենք, որովհետև նա է մեր Տերն ու Արարիչը, որ իր աստվածային Արյունը տվեց համուն մեզ, իսկ Արյունով զվաճածներին կորստյան չի մատնի: Այն ժամանակ, երբ երես դարձրինք ու փախանք նրանից, իր անճառ գթությանը մեզ դարձի բերեց: Այժմ, երբ դեպի իրեն ենք դառնում, ինչու՞ պիտի վաճի մեզ: Գթությանը առատ է, ողորմությանը՝ մեծ, կարող է և ամենագոր: Ինչպես այն ժամանակ ավագանի ջրով, այժմ արտասուքով է մեղավորներին թողություն տալիս: Ուստի Նրան վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյան հավիտեհից: Ամեն:

Գրիգոր Տաթևացու «Ամբարն հատոր»-ից ժամանակակից հայերենի փոխադրեց  
ԽՈՐԵՆԻ ԱՐԿԱՆԿԱՅԵ ԱՄՆՈՒԿՅԱՆ

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Յ Ո - Ա Ձ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**

**ԻՄ ԲԱԺԻՆ ՔԱՐԸ**  
**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԵՆՔԻՆ**

Վանաձոր քաղաքի կենտրոնական պողոտայի (Տիգրան Մեծի 1) վրա կառուցվելու է Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքը:

Այս տարի կմեկնարկի շենքի շինարարությունը, որին իր աջակցությունը կարող է բերել յուրաքանչյուր ոք՝ իր բաժին քարը դնելով շենքի պատին: Հիմա՛վի, մարդու իրավունքները համընդհանուր բնույթ ունեն: Եվ Մարդու իրավունքների շենքն էլ համընդհանուր ցանցերով է կառուցվում:

Ահավասիկ, օրեցօր մեծանում է ներդրումներ կատարողների թիվը:



**ՆՈՐ ՊԼԱՏՎՈՒՄՆԵՐՆ ԵՆ՝**

1. Հովհաննես Նիկողոսյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (12 քար՝ 3.000 դրամ)
2. Լուսինե Մազակյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
3. Արմիրա Եվիսյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (10 քար՝ 2.500 դրամ)
4. Արարատ Դավաթյան, Լոռու մարզ, գ. Աջորի (8 քար՝ 2.000 դրամ)
5. Ասյա Թումոյան, Լոռու մարզ, գ. Աջորի (4 քար՝ 1.000 դրամ)
6. Գրիգոր Առաքելյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
7. Վերոնիկա Մարիբեկյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
8. Հովհաննես Թորոսյան, Ռուսաստանի Դաշնություն, ք. Ռեմզա (4 քար՝ 1.000 դրամ)
9. Լիանա Եգայան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
10. Կարինե Բաղդասարյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
11. Ռեբեկա Ղազարյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
12. Գրետա Բայլայան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)

13. Հովհաննես Ղազարյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
14. Կարինե Կարախանյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
15. Սուսաննա Հարությունյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
16. Լուսինե Հարությունյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
17. Վարդուշ Օստրոյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
18. Լիանա Լևոնյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
19. «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (40 քար՝ 10.000 դրամ)

Եթե ցանկանում եք Ձեր մասնակցությունն ունենալ այս կարևոր գործում, նպաստել Մարդու իրավունքների կրթության զարգացմանը, ապա կարող եք **Ձեր ԲԱԺԻՆ ՔԱՐԸ** դնել Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի պատին՝ հատկացնելով ընդամենը 250 դրամ:

Գումարը կարելի է փոխանցել հետևյալ բանկային հաշվի համարին՝ 001-093392-001 ԵՃ-ԵԱ-ԲԻ-ՍԻ (HSBC) բանկում կամ պարզապես գանգահարել +374 (322) 22967 հեռախոսահամարով և տեղեկացնել Ձեր այդ գանկությունը մասին:

ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբանցք, թիվ 2, կայքէջ՝ www.acrpc.am

ՀՍԻԿ նախագահության, աշխատակազմի և շահառուների անունից շնորհակալություն ենք հայտնում Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար:

Ան այսօր ՄԻՅԴ շենքի կառուցման հանգանակությանը մասնակցություն է ունեցել 66 մարդ 7 մարզերից՝ ներդրելով 135.550 դրամ գումար:

ՄԻՅԴ շենքի կառուցման համար անհրաժեշտ է 440.880.000 դրամ կամ 1.763.520 քար:

**ՆԿԻՐԱԲԵՐՎԵԼ Ե՝ 542 քար**  
**ՄԱՅՅԵԼ Ե՝ 1.762.978 քար**

**ՄԱՐԴՎԱԿՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳՎԱՅԻՆ ԱՎԱԳԵՄԻԱ**

Մարդկային անվտանգության միջազգային ակադեմիան 2008 թ հուլիսի 20-30-ը կազմակերպում է դասընթաց Մարդու իրավունքների քաղաք Գրազում (Ավստրիա):

Ամենամյա այս ծրագրի նպատակն է ամրապնդել ժողովրդավարական սկզբունքները և բարձրացնել իրազեկության մակարդակը մարդու իրավունքների կրթության և քաղաքացիական կրթության միջոցով՝ իրազեկելով այն սպառնալիքների մասին, որոնցով ազգամիջյան ահաբեկչական և հանցավոր կազմակերպությունները սպառնում են Արևմտյան Բալկաններում խաղաղարարության և վերականգնողական գործընթացին:

Տասնօրյա դասընթացին կարող են մասնակցել ասպիրանտներ, երիտասարդ հետազոտողներ, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ում աշխատանքն առնչվում է ահաբեկչության և կազմակերպված հանցագործության խնդիրների և խաղաղարարության հետ: Աշխատանքային լեզուն է անգլերենը: Դասընթացի վերջում ակտիվ մասնակցություն կտրվի վկայականներ: Հնարավոր է նաև կրթաթոշակի տրամադրում: Դիմելու վերջնաժամկետն է ապրիլի 15-ը: Սամրաման տեղեկությունների համար կարելի է այցելել [www.summeracademy.etc-graz.at](http://www.summeracademy.etc-graz.at) կայքէջ:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱՄԵՐԻԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի իրավաբանական վարժարանը 2008 թ. մարտի 18-23-ը կազմակերպում է 13-րդ ամենամյա «Մարդու իրավունքների միջամերիկյան ուսումնական դասավարություն» մրցույթը: Մրցույթն արժեքավոր կրթական գործընթաց է մարդու իրավունքների քննարկումների համար:

Մրցույթը բացառիկ հնարավորություն է՝ ծանոթանալու Մարդու իրավունքների պաշտպանության համակարգերին: Սա մի բազմաձևակույթ և բազմալեզու (անգլերեն, իսպաներեն և պորտուգալերեն) միջոցառում է, որ նպաստում է ամբողջ աշխարհից Վաշինգտոն ժամանած իրավունքի բնագավառի գիտնականների, իրավապաշտպանների և ուսանողների շփմանը:

Մասնակցել կարող են ուսանողներ, միջազգային և քաղաքացիական ծառայողներ, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մասնակցությունը կարող է լինել թիմերով և անհատական: Մասնակցության վճարն է 700 ԱՄՆ դոլար:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել [www.wcl.american.edu/mcourt](http://www.wcl.american.edu/mcourt) կայքէջ:

Հարգելի ընթերցող, խնդրում ենք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին՝ լրացնելով սույն ձևաթերթիկը և ուղարկելով խմբագրություն: Չեզոք ընդամենը պահանջվում է լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի համար:

1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացած է իրավական մշակույթը:

Ոչ  Մասամբ  Այո

2. Հասարակությունը իրազեկ է իր իրավունքներին:

Ոչ  Մասամբ  Այո

3. Թերթը իրախոսում է մարդու իրավունքների պաշտպանությունը:

Չի իրախոսում  Մասամբ  Խրախոսում է

4. Թերթն արժանի է հասարակությանը հուզող հարցեր:

Ոչ  Մասամբ  Այո

5. Ի՞նչ թեմաների շուրջ հոդվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Ձեր տվյալների նշումը պարտադիր չէ:

անուն, ազգանուն \_\_\_\_\_ հասցե \_\_\_\_\_

հեռախոս \_\_\_\_\_ էլ. փոստ \_\_\_\_\_

Լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հասցեով: Կարելի է պատասխանները ուղարկել նաև էլ. փոստով՝ [lc@acrpc.am](mailto:lc@acrpc.am) կամ հեռապատճենով՝ +374 (322) 4 47 81:

Թերթը իրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական ասիանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող վիստաթուղթ:

Հրատարակության Դ տարի  
Հիմնադիր և իրատարակիչ  
Հայկական ասիանադրական իրավապաշտպան կենտրոն  
ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2  
Հեռ.՝ +374 (322) 2-29-87/  
հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81  
Էլ. փոստ՝ [acrpc@acrpc.am](mailto:acrpc@acrpc.am), [lc@acrpc.am](mailto:lc@acrpc.am)  
Դասնացանցի էջ՝ [www.acrpc.am](http://www.acrpc.am)

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ Մանուկյան  
Խմբագիր՝ Հերմինե Բաբոյան  
Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակների չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հիշումը «Իրավական մշակույթի» պարտադիր է:

Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Շվեդիայի 2 տպագրական մամուլ:  
Ստորագրված է  
տպագրության 2008 թ. 03. 14:  
Տպաքանակը՝ 2000:  
Տպագրվել է «Չանգակ-97»  
հրատարակչատանը:

Իրավական մշակույթ  
Legal Culture  
Православная культура  
Տարածվում է անվճար